ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 մայիսի 2016 թվականի N 131-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ <<ՆԱԻՐԻԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N 143-Ն հրամանով հաստատված հավելվածի 177-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2012 թվականի դեկտեմբերի 3-ի N 517-Ա որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 59-րդ կետը և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2015 թվականի դեկտեմբերի 29-ի N 357-Ա որոշումը՝ **որոշում եմ.**

1. Ստեղծել աուդիտորական առաջադրանքի աշխատանքային խումբ հետևյալ կազմով և գործուղել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Նաիրիի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերություն (այսուհետ՝ ընկերություն)՝ 2016 թվականի մայիսի 18-ից մինչև հունիսի 07-ը ներառյալ ընկերությունում համակարգի գնահատման աուդիտ իրականացնելու նպատակով՝

1) ***Կոմիտաս Հունանյան*** - խմբի ղեկավար, մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ,

2) ***Անահիտ Սրեփանյան*** - անդամ, մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ,

3) ***Արամ Գրիգորյան*** - անդամ, մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ,

4) ***Ռուբրամ Մկրտչյան*** - անդամ, մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ:

2. Աուդիտորական խմբին՝ աուդիտորական առաջադրանքը իրականացնել 2015 թվականի համար ներկայացված ֆինանսական և այլ բնույթի հաշվետվություններում տեղ գտած տեղեկությունների արժանահավատության և դրանց ստանդարտների կիրառելի հիմունքներին համապատասխանության, ընկերության կողմից կատարված փաստացի և դրամարկղային ծախսերի հիմնավորվածության, անվճար կամ արտոնյալ պայմաններով ղեղերի ստացման, ձեռք բերման, հատկացման և հաշվետվությունների ներկայացման, ընտանեկան բժշկի, մանկաբարձ-

գինեկոլոգի կողմից իրականացվող բժշկական օգնության և սպասարկման կանխարգելիչ ծրագրերի (սկրինինգների) չափորոշիչին համապատասխանության, զուտ շահույթի տնօրինման, շահութաբաժնի հաշվարկման և վճարման գործընթացների, գնման ընթացակարգերի արձանագրություններում տեղ գտած տեղեկությունների, պայմանագրով կողմերի ստանձնած պարտավորությունների պայմանագրին համապատասխանության, ընկերության ակտիվների և պարտավորությունների ամենամյա գույքագրման գործընթացների, աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցների հաշվարկման և վճարման գործընթացի գնահատման նպատակով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ. ԳՈՒԼՈՅԱՆ

2016 թվականի մայիսի 12
ք. Հրազդան